

Այժմեական Նիւթեր

# ԱՆԱՐԺԱՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԵՆՔ ԵՒ ԱՐԺԱՆԱԻՈՐԸ Կ'ԱՆՏԵՍԵՆՔ

Գիտե՞ք ինչ է մեր ժամանակի ամենավրդովիչ ու ամենամոռայլ երեւոյթը, որ խոր վիշտ կը պատճառէ պարկեշտ մարդուն:

Արժէքներու գլխավայր շրջում եւ իրողութիւններու խեղափոխում: Ժամանակակից մարդը՝ նիւթապաշտ խտելներէ հրապուրած՝ կը շրջէ ինչ որ Բաղաճակարկական արժէք է, եւ կու տայ ինքզինքին շրջում սեղանի մը դիրքը, գուլթը վար եւ ոտքերը վեր:

Ամէն բան կը սիրէ հակոտնեցալ տեսնել եւ առանկապէս կարեւորութիւն կու տայ այն բաներուն, որոնք կոյտովի արտադրութիւններ են:

Այն բանէն, որ ամօթ պէտք է զգար ու կարմրէր՝ կոկորդիլ կը ստեղծէ եւ այն բանէն, որ պէտք է հպարտանար՝ կ'ամչնայ: Պարզ խօսքով, հոն ուր պէտք է ճշմարտութիւնը շփոթել ու հերոսանայ՝ լիեզուր կ'անդամալուծէ եւ հոն՝ ուր պէտք է լուս մնայ՝ բուրբակի նման կը շաղկարատէ:

Եւ որովհետեւ որեւէ արգելիչ ու դիմադրութիւն չկայ, չարը՝ նամբան ազատ կը գտնէ ու սանձագերծ կը յառաջանայ: Կ'աղմկէ, կ'ամբոխավարէ, իրեն համար վարչակարգ կը ստեղծէ եւ ի վերջոյ բոլորին վրայ կը հաստատէ միանեծան մեծատիրութիւն: Քանի որ հանրային ամենակարեւոր դիրքերը լուսած կը գտնէ անտարբերներ կը լուս, ալ ի՞նչ պատճառ կայ, որ գողը չաղաղակէ:

Թիթեղի չափ արժէք չունեցող տաղանդագուրկ մարդիկ անսպասելի մտաբանութեամբ մտազարած, իրենք իրենց համար յորհեմակներ կը կազմակերպեն, որպէս բանաստեղծ կամ բանաստեղծուհի, դերասան կամ դերասանուհի, երգիչ կամ երգչուհի եւ կը գտնեն ծանօթ ու անճանօթ գրողներ, որոնք գեղահիւս տողերով թերթերու մէջ իրենց փառասիրութիւնը կը փայտայնեն եւ յորձանշուրքն կը դրուատեն իրենց մտքին ու հոգիին մինչեւ յատակը պարսպութեամբ յօրանեցող ունայնամիտներ: Եւ ժողովուրդին որչա՞ մէկ գանգուածը, որ շատ դիրքին ու շուս կը խաբուի, մերթ աղմուտ բացազանչութիւններով եւ մերթ յոտնկայ ծափերով կը պանծացնէ արուեստի այս ծաղրածուները: Եւ անոնց արուած պատիւը յանախ կ'ըլլայ այնքան շուայ, որ յորհեալը կը կարծէ ըլլալ Հոլիվուտի շաղկապը: Աստղերէն մէկը:

Եւ այսպէս երանանք ջոյցերէ, իր տկարութիւններուն անճը կը բողոս ազատ, որ առաւել խորանան եւ անհեման իր հոգիին տղմուտ յատակը:

Երբ մարդոց մեծամասնութիւնը կը մտորի ու կը կորսնցնէ իր մտային հասարակչութիւնը, ինքնաբերաբար փոխմասնութիւնը գեհեմային սպառազինումով դուրս կու գայ իր որջէն եւ օգտագործելով բոլոր պատեհութիւնները կը տարածէ իր բունատիրութեան սահմանները:

Ցարը միշտ արբուն է, լայն չափով կ'օգտուի անտարբերներու հանդուրժողութեանն ու բժբիրէն:

Հիմա հարցնենք, ի՞նչ կ'ընենք մենք, երբ կը տեսնենք գեղծարարը գողօնը բռնած իր ձեռքերուն մէջ:

Կը ձեռքակալե՞նք, կը հետապնդե՞նք, կը կշտամբե՞նք, արդարութեան կը յանձնե՞նք:

Երբե՛ք, այս սպառնալիքներէն ո՛չ մէկը կը յանգցնենք գործածել եւ ոչ ալ մեղադրանքներու ճշտակ կը դարձնենք իր արժանապատւութիւնը:

Ընդհակառակը՝ կը մտեմանք ու կը պատուենք զինքը իր գործած ապօրինութիւններուն համար: Շնորհաւորագիր կու տանք իրեն, որ յաջողած է Բեքթոլական գագար մը նուանել բանագողութեամբ: Իր մեծադիր նկարը կը գեղեցիկ թերթին ամէնէն պատուարքեր էշին վրայ, որ կրցած է գարտուղի միջոցներով ապահովել կարգ մը ակամաւոր մտաւորակներու փողաբանական վկայութիւնները:

Այս բոլոր տգեղութիւնները շատ մը պարագաներու մէջ կը կանխուէին, եթէ ամէն ողջամիտ ու պարկեշտ մարդ՝ ինքզինքն կրատէր հասարակութեան մէկ պատասխանատու մասնիկը:

Եթէ ես՝ որպէս հոգեւորական եւ դուն՝ որպէս մտաւորական համարակութիւնը չունինք ոսկիին ոսկի ըսելու եւ թիթեղին թիթեղ, ամառ մեր հայու կոչումին ու արժանապատուութեան, թիւր ախտ, հասարակութեան մէջ մեզի վստահուած տիրակալ դիրքերուն: Առաւել կամ նուազ չափով, գրեթէ ամէնքս ալ յանգաւորներ ենք եւ կեղծատրուութեան սիրոյն կը փորձուինք գովաբանել ստուերային արժէքներ, որոնք ստաս պտուղներու նման կ'ուզեն ըմբռնելու իր հասարակութեան:

Եւ շատ անգամ՝ պարտուած մարդուն նուաստացումով իրաւունք կու տանք անոնց, որոնք կը ստիպեն մեզ, որ սեւիկներ մակ ընենք եւ ներմակին սեւ, արժանաւորին՝ անարժան եւ անարժանին՝ արժանաւոր:

Երբ մարդ չի կրնար անկողնել պահել իր արժանապատուութիւնը եւ իր ինքնավարութեան ղեկը կը յանձնէ ուրիշին, ալ այդ մարդուն համար կրնանք ըսել, որ ստուրկ մըն է, եւ ստուրկներուն մէջ ամենարգահատելին:

Անհատը կամ հասարակութիւնը, որ կը գործակցի մեղքին հետ եւ կը Բաջալերէ մեղաւորը, նոր սայրաբումներու դուռը կը բանայ անոր առջեւ: Այդ պարագային՝ ա՛յ վերականգնում չկայ, ա՛յ անկ վերջ չենք կրնար մարդուն մէջ բարոյական մարդը տեսնել եւ ընկերութեան մէջ գաղափարապաշտ ընկերութիւնը:

Ի՞նչ համբաւեալ գրագետներ, արուեստագետներ, բանաստեղծներ ունինք Սփիւռքի մէջ, ամէն հիւրընկալ ափի վրայ, որոնք իրենց կեանքի ողջակիզումով ստեղծագործեր են եւ այսօր կը գտնուին համեստօրէն իրենց մայրամուտի հանգրուանին:

Ոչ ոք կը մտածէ ի պատիւ անոնց հարուստ գրավաստակին յորհեմներ արբեղել եւ ժողովրդային երախտագիտութեան հասուցումով շողաբանութեամբ մէջ անոնք վերջապատային կեանքին:

Ինչպէս արեւոյ մը գաւազանի տուչութիւն ստանալէ ետք, առանց յամենալու որոշ շրջան մը իր նուիրապետական կարգին վրայ կ'անապարէ անժամանակ եպիսկոպոսանալ, այնպէս ալ արժան կամ Բեքթոլական հատոր մը հրապարակ հանողը, առանց ժամանակ տալու իր տաղանդի անուամբ, կ'ուզէ որ մարդիկ կամ կ'զգայնորոշուին իրենց հրապարակային հանդիսութեամբ պատուեն զինքը: Ամէնուրեք արժէքներու հակադրութիւն: Մարդիկ կը Բաջալեն շրջուն սեղանի մը դիրքով: Գուլթը վար եւ ոտքերը վեր:

\*\*\*

Աշխարհաեղծակ վիպասան Վիլբոր Հիւկօ, իր երիտասարդութեան օրերուն կը հրատարակէր բանասիրական պարբերաթերթ մը:

Օր մը, ճշմանաւոր Բեքթոլ մը ինքնահաւան գրողէ մը երկարաշունչ գրութիւն մը կը ստանայ ներփակ երկտողով մը, որուն մէջ հետեւեալը կ'ըսէր.

- Եթէ գրութեանս մէջ պատահի, որ տեղ-տեղ ստորակետի կամ միջակետի պակասներ կանգնէ, հանեցէ՛ք հոգածու ըլլալ:

Մեծանուն Բեքթոլը նկատէ, որ մը էջ միայն յօդուածը կարդալէ յետոյ, հետեւեալ պատասխանը կը գրէ.

- Սիրելիս. կը խնդրեմ՝ Բեքմէ, որ յաջորդ անգամ միայն ինձի դրկես ստորակետներ եւ միջակետներ, մնացեալը ես կը լրացնեմ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԷՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

## Չկնարկ ԸՄԱԿԱՔԱԿԱՆ ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Հիմա երբ Թուրքիոյ սահմանադրական դատարանը կը քննարկէ «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութիւնը փակելու պահանջը, վարչապետ Ռեճեպ Թայյիփ Էրտողանի կուսակցութիւնը իր առջեւ ունի երեք այլընտրանք: Առաջինը՝ սահմանադրական փոփոխութեան համար ընդդիմութեան հետ համաձայնութիւն, երկրորդը՝ համընթաց, երրորդը՝ դատարանին մէջ պաշտպանուելու հնարաւորութիւն:

«Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութիւնը արդէն իսկ սկսած է խորհրդարանական ընդդիմադիր հոսանքներու հետ խորհրդակցութիւններու շարքի մը, անոնց ազակցութիւնը ստանալու համար: Բանակցութիւններու ընթացքը այնքան ալ հեզապահ չ'ընթանար:

Հանրապետական կուսակցութիւնը յստակօրէն յայտարարեց, որ համաձայն է հանրաքուէի տարբերակին:

Ազգայնական Շարժում կուսակցութիւնը, իր ընդդիմութիւնը արտայայտեց «Արդարութիւն եւ Բարգաւաճում»-ը փակելու առաջարկին, բայց, ան կը պահանջէ դատի տալ կուսակցութեան առաջնորդը՝ Ռեճեպ Թայյիփ Էրտողանը:

Խորհրդարանին մէջ քսան ներկայացուցիչներ ունեցող քրտական Դեմոկրատական կուսակցութեան դիրքը բաւական կասկածելի է: Ան, շատ հաւանաբար իր հաւանութիւնը տայ «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութիւնը փակելու որոշումին:

Այս շփոթ կացութեան մէջ, լաւագոյն ընտրանքը կրնայ ըլլալ սահմանադրական փոփոխութիւններու իրաւաստութիւն ձեռք բերելու համար հանրաքուէի որոշումը: Հանրաքուէն ոչ միայն կըրնայ կանխել «Արդարութիւն եւ Բարգաւաճում»-ը փակելու հնարաւորութիւնը, այլեւ ամրապնդել անոր դիրքերը, Թուրքիոյ քաղաքական ներքին եւ արտաքին դաշտերուն մէջ:

Բայց այս քայլին պէտք է դիմել նախքան դատարանին որոշումը եւ անշուշտ... բանակի հրամանատարութիւնը եթէ արտօնէ: Հակազդելով երկրին մէջ տիրող լարուած մթնոլորտին վարչապետ Ռեճեպ Թայյիփ Էրտողան իր կուսակցիցները հրաւիրեց հանդարտութեամբ սպասելու դատավարութեան վճիռին:

Ան առաւելաբար ծանրացաւ երկրին արձանագրած տնտեսական վերելքին վրայ: Էրտողան յիշեցուց, որ Թուրքիոյ արտաձումները 2002-ին, 36 միլիառ տոլար կը հաշուէին, իսկ 2007-ին, ան բարձրացաւ մինչեւ 107 միլիառ տոլար: Ան ըսաւ, թէ ոչ ոք իրաւունք ունի այդ առաւելութիւնները անտեսելու: Իսկ կուսակցութեան գործադիր մարմինը Երկուշաբթի օր արտակարգ ժողով մը կախի գումարէ, ճշնելու համար կուսակցութիւնը փակելու հարցին ուղղութեամբ որոշարեւելիք ուղեգիծը:

## «ՍՈՒՐԲ ՍԱՅԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՊԱՏՈՒՅ ԲԱՐՁՐ ՇԵԱՆՇԱՆ՝ ԿԱՐՈՒԺԱՆ ԽՏՃԵՆԱՆԻՆ

28 Մարտին Ս. Էջմիածինի մէջ Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոս լիբանանահայ բեմադրիչ Վարուժան Խտճեանը պարգևատրած է Յայաստանեայց առաքելական եկեղեցւոյ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանով՝ անոր 70ամեայ յոբելեանի առիթով եւ մշակոյթի ակադամական մէջ անոր ներդրումին եւ արգասաւոր ծառայութեան ու վաստակին համար:

Ս. Էջմիածինի հաղորդած տեղեկատուութենէ կ'իմասնաք, որ վեհափառը շեշտած է Վ. Խտճեանի վաստակը սփիւռքահայ թատրոնի գործանքն եւ յատկապէս Յայաստան-Սփիւռք թատերական կապերու ամրապնդման ու արդիւնաւորման կարեւոր գործին մէջ:

«Թատերասեր հայ հասարակութեան ծանօթ եւ ձեռք բեմադրութիւնները եւ յիշարժան բեմականացումները Յայաստանի բեմերուն վրայ: Անոնք մեծ աշխուժութիւն յառաջացուցին Մայր հայրենիքի մշակութային կեանքին մէջ: Գիւրախաղողով հանդէս գալով Սփիւռքի հայ համայնքներուն մէջ՝ որք նաեւ հայաշունչ ոգին ու մեր թանկագին արժեքներուն նկատմամբ սերը հաստատած էք մեր ժողովուրդի գաւակներու հոգիներուն մէջ», ընդգծած է վեհափառը:

## «Միջ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄԸ ՅՐԱՄԱՅԱԿԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՄԻ ԿԵՐԱՆՈՐԳԱՆ՝ ՅԱՐԱՓՈՒՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ», Կ'ԸՍԵ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՐԻԿՈՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Գերմանիոյ մէջ հրատարակուող պարբերաթերթի մը հետ հարցազրոյց մը ունեցաւ, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական հարցեր քննարկող: Յիշեալ հարցազրոյցին մէջ վեհափառ հայրապետը շեշտեց, թէ եկեղեցիներ պէտք է տարբեր հայեցակետով դիմեն այլեւ միջ-եկեղեցական շարժումը: Աշխարհը եղբայրային է և որ պարզացումներու: Ընդհանրապէս կրօնի դերը սկսած է շեշտուիլ ընկերութեան կեանքին մէջ: Եկեղեցին չի՝ կրնար անտարբեր մնալ այս բոլորին դիմաց: Միջ-եկեղեցական շարժումը կարիքը ունի նոր ինքնաճանաչման, աշխարհը յուզող հարցերու նկատմամբ նոր մօտեցումներու, ինչպէս նաեւ նոր օրակարգի:

## ՆՈՐ ՅՐԱՏԱՐԱՎԿՈՒԹԻՒՆ ՅԱՅՎԱԿԱՆ ՇՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մեծն Բրիտանիոյ Օքսֆորտ համալսարանի հրատարակուող լոյս ընծայեց Ետիսպրոկի համալսարանի ժամանակակից պատմութեան փրոֆեսոր Տոնալտ Պլոքստիի "The Great Game of Genocide: Imperialism, Nationalism and the Destruction of the Ottoman Armenians" գիրքը, ուր հեղինակը Առաջին Յամաշխարհային պատերազմի ընթացքին հայ ժողովուրդին դէմ կատարուածը կ'որակէ ցեղասպանութիւն:

## ՅԱՅՎԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹԸ ՄՈՍԿՈՒՄՅԻ ՄԷՋ

Մոսկուայի մէջ սկսաւ լոյս տեսնել հայ առաքելական եկեղեցւոյ ամսաթերթը: Պարբերաթերթը, որ նախատեսուած է ընթերցողներու լայն շրջանակի համար՝ բացի եկեղեցւոյ մասին պատմող նիւթերէն նաեւ պիտի բովանդակէ մշակութային եւ հայ հասարակական կեանքէ առնուած նիւթեր: Ռուսիոյ մէջ կ'ապրի առնուազն մէկ միլիոն հայ:



## Ծուրպուլ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՇԱԲԱԹԱԿԵՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երոպական երկիրներու ազգային ախոյեանութիւնները կը մօտեան իրենց ւարտին: Այս բաւարար պատճառ մըն է, որ մրցակցութիւնը սրի եւ խանդավառութիւնը աւելնալ ընդհանուր դասաւորման արդիւնաւորութիւնը վերին թէ վարին մասերուն մէջ տեղ գրաւող խումբերուն միջեւ:

Ստորեւ կը ներկայացնենք կայանալիք կարեւոր մրցումներուն խաղացանկը.

<b>ԱՆԳԼԻԱ</b> (33-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ)	<b>ՄՊԱՆԻԱ</b> (31-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ)
<b>ՇԱԲԱԹ</b> Ուեսթ Պրումիչ - Փորսմաուրթ (Չէլենք Զափ)	<b>ՇԱԲԱԹ</b> Մայորքա - Ռեալ Մատրիտ
Արսենալ - Լիվըրպոլ Մանչեսթըր Սիթի - Չէլսի	<b>ԿԻՐԱԿԻ</b> Աթլետիքո Մ. - Ալմերիա Պարչելոնա - Կեթաֆէ Սեւիլլա - Կիտաեալ
<b>ԿԻՐԱԿԻ</b> Պարսելի - Զարտիֆ Սիթի (Չէլենք Զափ)	<b>ԳԵՐՄԱՆԻԱ</b> (27-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ)
Էվըրթըն - Տըրքի Գաուլթի Միլլապոլո - Մանչեսթըր Եունայթըտ	<b>ՇԱԲԱԹ</b> Բեթա Պերլին - Կերտըր Պրեմըն Շալքէ 04 - Զանգա Ռոսթըր Շթուրթկարթ - Զամպուրկ
<b>ԻՏԱԼԻԱ</b> (32-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ)	<b>ԿԻՐԱԿԻ</b> Պայերն Միւնխի - Պոլոս Պոլոսիա Տ. - Պայեր Լիվըրքուգեն
<b>ՇԱԲԱԹ</b> Ա. Սե. Միլան - Զալխարի Ա. Ես. Ռոմա - Ծենտկա	

## ԵՐԵՒԱՆԻ «ՅՐԱՉՂԱՆ» ՄԱՐԶԱՂԱՇՏԸ ԿԸ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ

Սկսած են Երեւանի «Յրագղան» մարզադաշտի վերանորոգման լայնածաւալ աշխատանքները: Ինչպէս «Արմէնփրես»-ին տեղեկացուց «Յրագղան» հոլտիսիկ մամուլի պատասխանատու Թամար Սարգսեան, վերանորոգումը կ'իրականացուի գերմանական շինարարական ընկերութեան հետ համագործակցութեամբ, որմէ ետք մարզադաշտը կը համապատասխանէ «ԵՐՈՒՅՖԱ»-ի կողմէ սահմանուած միջազգային չափանիշներուն եւ կը կարողանայ ընդունիլ աւելի քան 50 հազար ֆութպոլիստ: Թ. Սարգսեանի խօսքով, մարզադաշտին մէջ մշտապէս կատարուած են տեղային վերանորոգման, ջրահեռացման, ջրամեկուսացման, խտածածծի վերականգնման եւ այլ աշխատանքներ:

## ԵԳԻՊՏՈՍ «ՅԱՅԱՍՏԱՆ-ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ. ԱՆՑԵԱԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ» ԳԻՏԱԺՈՐՈԿ

Գահիրէի համալսարանի Յայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոնը, համագործակցութեամբ Եգիպտոսի մէջ Յայաստանի դեսպանատան եւ Եգիպտահայ համայնքի մշակութային եւ հասարակական կազմակերպութիւններու, հովանաւորութեամբ Եգիպտոսի արաբական հասարակութեան բարձրագոյն կրթութեան եւ գիտական հետազոտութիւններու Նախարար Զանի Զիլալի, Ապրիլի 29ին, Գահիրէի համալսարանի բանասիրական բաժանմունքի համաժողովներու դահլիճին մէջ կազմակերպած է միջազգային գիտաժողով՝ «Յայաստան-արաբական աշխարհ. անցեալը եւ ներկան» խորագրով: Գիտաժողովին հրաւիրուած են յայտնի հայագետներ արաբական բազմաթիւ երկիրներէ, ինչպէս նաեւ արաբագետ գիտականներ Յայաստանէ: Այս բացառիկ գիտաժողովին զուգահեռ տեղի պիտի ունենայ արաբալեզու հայագիտական գրականութեան ցուցահանդէս:

### «ՀՐԱՇՔ»

Փարաուններու հրաշալի օրրանէն, Հայրենաբաղձ մարդ մը մեծ, Աստղալուսին գիշերուան մը ընդերքէն, Միանամուտ ազգս մեծ, սրբագործութեան լծեց:

Երկնաւազ բուրգերու խորհրդաւոր վեմութեամբ տողորում  
Այս մեծ մարդը, Աստուածային շնորհքով լիպցաւ:  
Եւ լիպարար, օրհնեալ ձեռքը ժողովուրդիս երկարեց,  
Ու երկնամարմին նշխարով սրբաղեղ հայութիւնը հաղորդեց:

Ազնի հայեր, մեծամեծներ վեհոգի,  
Հաւաքուցան ապարանքին պատկառագործ փաշային,  
Եւ ուխտեցին ձեռք բարիք լուսաշող,  
Թիկունք կանգնիլ որբին, ծերին, անճարին,  
Ուսում ջանքել թոքովախօս մանուկին,  
Օճախ հիմնել հայրենագործ պանդուխտին:

Ահա այսպէս այգաբացին վարդաթոյր,  
Ծնունդ տուին Մեծ՝ խորիմասա խոլուամին:  
Ծնաւ Մեծ միտք, Մեծ՝ փրկութիւն, գորութիւն՝  
Ազգապահպան Հայկական Բարեգործական Ընդհանուր Հօրագոյն Միութիւն:

**ՄԱԼԵՒԱՐ**

2 Ապրիլ 2008